ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 4.

2018 թվականի հունիսի 7-ին տեղի ունեցավ ՀՀԿոտայքի մարզի
Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի 11բ դասարանի ծնողական ժողովը:
Ժողովին ներկա էին բոլոր ծնողներն ու աշակերտները:
Ժողովը վարում էր դասղեկ Մարինե Քոչարյանը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝
1. 2017-2018 ուստարվա արդյունքների ամփոփում
ա) ուսման առաջադիմությունը 2-րդ կիսամյակում
բ) տարեկան գնահատականների ամփոփում
գ) հաճախումների արդյունքները ուսումնական տարվա ընթացքում

2. Ընթացիկ հարցեր (ամառային արձակուրդի ճիշտ կազմակերպում,էքսկուրսիայի կազմակերպում)

1. Լսեցին.- 2017-2018 ուստարվա արդյունքների ամփոփում հարցը:

Ելույթ ունեցավ դասղեկ Մարինե Քոչարյանը:
Նա ամփոփ ներկայացրեց դասարանի աշակերտների 2-րդ կիսամյակի արդյունքները և նկատեց, որ այս կիսամյակում աշակերտներից շատերը աշխատասիրության շնորհիվ ապահովեցին բավականին լավ արդյունք, որը դրականապես ազդեց տարեկան գնահատականների վրա: Արդյունքում՝ դասարանում ունեցանք 2 գերազանց(Մերի Համբարձումյան, Աննա Սարգսյան) և 4 հարվածային(Լիլիթ Աբրահամյան, Գևորգ Խաչատրյան, Վահե Հովհաննիսյան, Համլետ Մարգարյան) առաջադիմությամբ աշակերտ:
Նշվեց նաև,որ բացակայությունների թիվը ուսումնական սարվա ընթացքում կազմել է 352ժամ, առաջադիմությունը 100, իսկ որակական ցուցանիշը 33,3 տոկոս է:Կատարվել է դասագրքերի ընդունում և հանձնում՝ առանց թերությունների:

Որոշեցին.

Նպատակաուղղված և ճիշտ կազմակերպել ամառային հանգիստը, որպեսզի ավարտական դասարանում բարձր արդյունքներ գրանցվեն:

2. Լսեցին.- Ընթացիկ հարցեր (ամառային արձակուրդի ճիշտ կազմակերպում,էքսկուրսիայի կազմակերպում)

Բուռն քննարկում տեղի ունեցավ, որին մասնակցում էին թե՛ ծնողները և թե՛ աշակերտները: Բոլորի նպատակն էր ճիշտ ու ռացիոնալ օգտագործել ամառային արձակուրդները: Տղաների ծնողներից գրեթե բոլորը նշեցին, որ իրենց երեխաները արդեն աշխատանքի պայմանավորվածություն ունեն,որը խրախուսանքի արժանացավ բոլորի կողմից: Որպեսզի ամառային հանգիստը լիարժեք լինի, առաջարկվեց(բոլորի կողմից) կազմակերպել էքսկուրսիա դեպի Լոռի, որի կազմակերպումը հանձնարարվեց ծնողկոմիտեի նախագահ Լուսինե Հովհաննիսյանին և անդամներին:

Որոշեցին.

Հանձնարարել ծնողկոմիտեի նախագահին և անդամներին ամենայն պատասխանատվությամբ կազմակերպել էքսկուրսիան՝ միշտ կապի մեջ պահելով դասղեկին և բոլոր ծնողներին:

Ժողովի նախագահ՝ ----------(Լ. Հովհաննիսյան)
Քարտուղար՝ ----------(Թ. Ավետիսյան)